ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE9B-FDA6-4A0A-931C հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/4894/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

07 մայիսի 2026թ.
ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Մոնթե կորպորեյշն» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ թիվ «ԱՔ-ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2026թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «Մոնթե կորպորեյշն» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Մոնթե կորպորեյշն» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2026թ. մայիսի 2-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ թիվ «ԱՔ-ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2026թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «Մոնթե կորպորեյշն» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2026թ. մայիսի 5-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2026թ. մայիսի 6-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մոնթե կորպորեյշն» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ թիվ «ԱՔ-ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2026թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «Մոնթե կորպորեյշն» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/4894/02/26 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. հունիսի 12-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2026.05.07 09:50:31 AMT